

ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**«ԿՈՂՄԻՑ» ԿԱՊՈՎ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ**

(ՀՀ ԶԼՄ-ՆԵՐԻ 2021–2025 ԹԹ. ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.246***ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննվում են «կողմից» կապով ձևավորված շարահյուսական կաղապարային կառույցները՝ ՀՀ լրատվամիջոցների 2021–2025 թթ. հրապարակումների հիման վրա: Հետազոտության նպատակն է բացահայտել այդ կառույցների կառուցվածքային, իմաստային և գործառական առանձնահատկությունները, դրանց տարածմանը նպաստող գործոնները, ինչպես նաև պարզել, թե որքանով են դրանք համապատասխանում հայերենի շարահյուսական օրինաչափություններին: Նշված խնդիրների լուծման համար կիրառվել են նկարագրական-վերլուծական, համեմատական-քերականական մեթոդները:

Առանձնացվել են երկու հիմնական կաղապար՝ «գոյականի կամ դերանվան սեռական հոլովածն + կողմից + բայանուն» և «անձնական դերանվան սեռական հոլովածն + կողմից + անորոշ դերբայ»: Դրանք առավել հաճախ հանդիպում են քաղաքական, դիվանագիտական և պաշտոնական հաղորդակցությունն արտացոլող մեդիատեքստերում: Քննվող կառույցների գործառական և կառուցվածքային համապատասխանությունը հիմք է տալիս դրանք դիտարկելու որպես ռուսերենի ազդեցությամբ տարածված շարահյուսական պատճենումներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս կառույցներում բայանվան և անորոշ դերբայի հետ գործածված ենթակայական սեռականը մատնանշում է այն անձը կամ կազմակերպությունը, որին վերագրվում է գործողությունը: Նման

գործածություններում «կողմից» կապը նոր շարահյուսական հարաբերություն չի ձևավորում և լրացուցիչ իմաստային բովանդակություն չի հաղորդում, այլ կրկնում է սեռական հոլովով արդեն արտահայտված սուբյեկտային հարաբերությունը:

Հոդվածում առաջարկվում է դրանք փոխարինել հայերենի օրինաչափություններին համապատասխան քերականական միջոցներով՝ սեռական հոլովաձևի, դիմավոր բայի կամ ուղղակիորեն արտահայտված ենթակայի միջոցով:

Բանալի բառեր և բառակապակցություններ. «կողմից» կապ, շարահյուսական կաղապար, ենթակայական սեռական, բայանուն, անորոշ դերբայ, քերականական ավելորդաբանություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զանգվածային լրատվամիջոցների լեզուն զգալի ազդեցություն է ունենում գրական հայերենի նորմերի ձևավորման և կայունացման գործում: Մեղիատեքստերում հաճախակի վերաբրտադրվող որոշ շարահյուսական կառույցներ կարող են լայնորեն տարածվել գրական լեզվում նույնիսկ այն դեպքում, երբ չեն համապատասխանում գրական հայերենի ներհամակարգային օրինաչափություններին:

Այս տեսանկյունից առանձնակի ուշադրության են արժանի այլ լեզուների, մասնավորապես՝ ռուսերենի ազդեցությամբ մեղիալեզվում տարածվող շարահյուսական կաղապարային կառույցները: Դրանց առաջացումն ու տարածումը պայմանավորված են լեզվական շփումների, թարգմանական գործունեության արդյունքում ձևավորված միջլեզվային ներգործությամբ: Հատկապես բառացի թարգմանությունների ժամանակ ռուսերեն շարահյուսական կաղապարները փոխանցվում են հայերեն՝ առանց վերջինիս ներքին օրինաչափություններին համապատասխան վերաձևակերպման: Այդ գործընթացին նպաստել է նաև ռուսերենի երկարատև գործառնությունը (խորհրդային և հետխորհրդային շրջանում) հանրային հաղորդակցության տարբեր ոլորտներում, ինչպես նաև որոշ կառուցվածքների կաղապարային

վերարտադրությունը: Լեզվաբանական գրականության մեջ նման երևույթը կոչվում է շարահյուսական պատճենում (**Պետրոսյան Հ., 1987**): Դա լեզվական փոխազդեցության դրսևորում է, երբ մի լեզվի (աղբյուր լեզվի) շարահյուսական կադապարը վերարտադրվում է մեկ այլ լեզվում (ընդունող լեզվում)՝ պահպանելով սկզբնական կառուցվածքի գործառնությանն ու իմաստային առանձնահատկությունները, նույնիսկ եթե այդ մոդելը խորթ է ընդունող լեզվի ներքին օրինաչափություններին:

Շարահյուսական պատճենման այսպիսի դրսևորումներից մեկը ժամանակակից մեդիատեքստերում «կոդմից» կապի հաճախադեպ կիրառությունն է՝ զուգորդված բայանվան և անորոշ դերբայի հետ: Այս կառույցի առանձնահատկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ այն ձևավորվել է ռուսերեն «со стороны» կապակցության շարահյուսական և գործառնական ազդեցությամբ:

Երկու լեզուների ձևաբանական տիպաբանական տարբերությունը հիմք է հանդիսանում սույն երևույթի հետագա վերլուծության համար: Ժամանակակից հայերենն ու ռուսերենն ունեն սինթետիկ լեզվամտածողության հիմք: Սակայն նրանց միջև կան նաև էական կառուցվածքային տարբերություններ. ժամանակակից հայերենը սինթետիկ-կցական լեզու է, որտեղ անվանական համակարգում քերականական հարաբերությունները արտահայտվում են մենիմաստ մասնիկների կցումով և հնչյունական հերթագայությամբ, իսկ բայական համակարգում՝ բազմիմաստ մասնիկներով և օժանդակ բառերով, մինչդեռ ժամանակակից ռուսերենը սինթետիկ-թեքական լեզու է, որտեղ քերականական հարաբերությունները թե՛ անվանական, թե՛ բայական համակարգերում հիմնականում արտահայտվում են բազմիմաստ մասնիկներով և հնչյունական հերթագայությամբ (**Աղայան Է., 1987**): Այս ընդհանրություններն ու տարբերությունները բխում են ինչպես երկու լեզուների ընդհանուր ծագումնային աղբյուրից (ընդհանրություններ), այնպես էլ տվյալ լեզուն կրող ժողովուրդների լեզվամտածողության և հասարակական կյանքի ներքին կառուցվածքային օրինաչափություններից (տարբերություններ):

Հենց այս տիպաբանական տարբերությունն է պայմանավորում հետազոտության առանցքային հարցադրումը՝ ինչպես են երկու լեզուների կառուցվածքային անհամապատասխանություններն ազդում շարահյուսական կադապարների փոխառման և ընդունող լեզվում դրանց գործառության վրա՝ հանգեցնելով ոչ լիարժեք յուրացման կամ կառուցվածքային ավելորդության:

Նշված տարբերության հաշվառմամբ պարզ է դառնում, թե ինչո՞ւ է ուսերենում սեռական հոլովով արտահայտվող հարաբերությունը («со стороны кого-либо») հաճախ պահանջում առանձին բառային (թեքական-վերլուծական) միջոց, մինչդեռ հայերենի կցական համակարգում սեռական հոլովաձևն ինքնին, առանց լրացուցիչ բառի, սկզբունքորեն բավարար կարող է լինել գործողություն կատարողին մատնանշելու համար: Այս դիտարկումից բխում է հետևյալ հարցադրումը. այն կառույցներում, որտեղ գործողություն կատարողն արդեն արտահայտված է գոյականի կամ դերանվան սեռական հոլովաձևով, «կողմից» կապի հավելումն արդյո՞ք հանդես է գալիս որպես զուտ ռճական ընտրություն, թե՞ իրենից ներկայացնում է նույն քերականական հարաբերության կրկնակի (ավելորդ) արտահայտում՝ հնարավոր շարահյուսական պատճենման արդյունքում:

«Կողմից» կապի՝ բայանվան և անորոշ դերբայի հետ կադապարային և թարգմանական կիրառությունների ուսումնասիրությունը ժամանակակից հայերենում համակողմանիորեն չի իրականացվել. մասնավորապես, բավարար չափով չեն հստակեցվել դրանց կառուցվածքային տիպերը և չի պարզաբանվել դրանց գործառական հիմնավորվածությունը հայերենի շարահյուսական համակարգում:

Սույն ուսումնասիրությունը միտված է բացահայտելու քննվող կառույցներում ուսերեն «со стороны» կապակցության շարահյուսական պատճենման հնարավոր դրսևորումները, գնահատելու դրանց գործածությունը գրական հայերենի նորմերի տեսանկյունից և առաջարկելու հայերենին բնորոշ համարժեք կառույցներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացրել ենք նկարագրական-վերլուծական և համեմատական-քերականական մեթոդների կիրառմամբ: Նկարագրական-վերլուծական մեթոդով հավաքագրել, համակարգել և բնութագրել ենք «կողմից» կապով ձևավորված կառույցների գործածության օրինակները: Առանձնացրել ենք դրանց հիմնական կառուցվածքային կաղապարները, քննել դրանց բաղադրիչների քերականական կապերն ու շարահյուսական հարաբերությունները: Վերլուծել ենք նաև «կողմից» կապի գործառական անհրաժեշտությունը յուրաքանչյուր համատեքստում՝ պարզելու՝ արդյոք այն արտահայտո՞ւմ է ինքնուրույն քերականական իմաստ, թե՞ կրկնօրինակում է անվանական ձևով արդեն իսկ արտահայտված սուբյեկտային հարաբերության իմաստը: Ստացված տվյալների հիման վրա գործածությունները դասակարգել ենք ըստ կառուցվածքային տիպի, իմաստային առանձնահատկության և գործառական միջավայրի:

Համեմատական-քերականական մոտեցումը հնարավորություն է տվել «կողմից» կապով կաղապարային կառույցները համադրելու դրա ռուսերեն սկզբնաղբյուրի՝ «со стороны» կառույցի հետ՝ բացահայտելով դրանց իմաստային և շարահյուսական հատկանիշների ընդհանրություններն ու տարբերությունները :

Հետազոտության նյութը ընդգրկում է 2021–2025 թթ. Հայաստանի տասը առաջատար լրատվամիջոցների /«Երկիր», «Ազգ», «Մամուլ», «Առավոտ», «Թերթ», «Ժողովուրդ», «168 Ժամ», «Իրավունք», «Ալֆա-նյուզ», «Այսօր»/ հրապարակումները: Ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է այդ հնգամյա հատվածում քաղաքական, ռազմական և հումանիտար կարևոր իրադարձությունների առկայությամբ, որոնք զգալիորեն ակտիվացրել են վարչագործարարական ոճի գործածությունը լրատվամիջոցներում, իսկ մեղիաների ընտրությունը՝ դրանց բովանդակային, քաղաքական և ժանրային բազմազանությամբ, որն ապահովում է երևույթի համակողմանի դիտարկումը: Հավաքագրված հիսուն օրինակից հոդվածում մանրամասն քննության ենք ենթարկել կառուցվածքային և գործառական առումով առավել բնորոշ տասնինը օրինակ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերլուծությունը կատարում ենք երկու հիմնական կադապարի շրջանակում՝ ըստ «կողմից» կապի գործածության՝

ա. գոյականի կամ դերանվան սեռական հոլովածն + կողմից + բայանուն,

բ. անձնական դերանվան սեռական հոլովածն + կողմից + անորոշ դերբայ:

Այս երկու կադապարների տարբերակման հիմքում դրվել է «կողմից» կապից հետո գործածված անվանական բաղադրիչի քերականական բնույթը: Առաջին խմբում այդ դիրքում հանդես է գալիս բայանունը, իսկ երկրորդում՝ գոյականաբար գործածված անորոշ դերբայը: Միաժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ «կողմից» կապը հայերենում օրինաչափորեն արտահայտում է գործողության իրական կատարողին, մասնավորապես՝ կրավորական կառույցներում: Հետևաբար քննության առարկան ոչ թե «կողմից» կապի բոլոր գործածություններն են, այլ միայն այն դեպքերը, որոնցում գործողություն կատարողն արդեն արտահայտված է այլ քերականական միջոցով:

Ա. «Գոյականի կամ դերանվան սեռական հոլովածն + կողմից + բայանուն» կադապարով կառույցների քննություն

Ժամանակակից հայերենի վարչագործարարական և հրապարակախոսական ոճերում հանդիպում են «գոյականի կամ դերանվան սեռական հոլովածն+կողմից+բայանուն» կառուցվածքով կապակցություններ: Դրանք կառուցվածքային և գործառական ընդհանրություններ են դրսևորում ռուսերենի «со стороны кого-либо / чего-либо + отглагольное существительное» կադապարի հետ: Այս ընդհանրությունը հիմք է տալիս հայերեն կառույցների ձևավորումը դիտարկելու ռուսերենի ազդեցության համատեքստում:

Ռուսերենում «со стороны» կապակցությունը լայնորեն գործածվում է հատկապես պաշտոնական հաղորդակցության մեջ՝ նշելով գործողություն կատարողին, նախաձեռնության աղբյուրը կամ տվյալ անձի, խմբի կամ կազմակերպության դիրքորոշումը: Այն կարող է ծառայել նաև հաղորդակցության մասնակիցների դերերի և պատասխանատվության սահմանազատմանը (Быстрова Е., Окунева А., Шанский Н. 1997):

անհրաժեշտության մասին, ուստի կանոնները որոշել է շաբաթ օրն առավոտյան գալ իմ բնակարան» (**«Երկիր», 10.04.2022**): «Այնպես որ, **Իրանի կողմից** այս **հայտարարություններն** ու հակազդող դիվանագիտական **քայլերը** պետք է նայել այդ դիտանկյունից» (**«168 Ժամ», 10.06.2025**): «Միայն այն, որ վերջիններս չեն ժխտում **իմ կողմից** դրամական փոխանցումների **կատարումը**, **իրենց կողմից** դրանց **ստացումը** ևս վկայում է այն մասին, որ նշված անձինք գործել են հանցավոր համաձայնության գալու եղանակով» (**«Առավոտ», 17.09.2021**): «Փորձենք հասկանալ՝ հնարավո՞ր է **իրենց կողմից գնումը**» (**«Առավոտ», 28.01.2021**): «Հետաքրքրական է, որ իշխող ուժի ներկայացուցիչները առաջ մղեցինմյուս նախաձեռնությունները՝ առանց անսալու մասնագետների և մամուլի՝ այդ թվում և **մեր կողմից զգուշացումներին**» (**«Երկիր», 03.12.2022**): «**Մեր կողմից** ցանկացած **անտեղյակություն** նոր բռնությունների, նոր վայրագությունների հնարավորություն կտա» (**«Երկիր», 11.10.2022**):

Այս օրինակներից հետևում է, որ «կողմից» կապը կրկնօրինակում է սեռական հոլովով արտահայտված սուբյեկտային հարաբերությունը և առաջացնում շարահյուսական ու իմաստային ավելորդություն:

Բ. «Անձնական դերանվան սեռական հոլովաձև + կողմից + անորոշ դերբայ»
կադապարով կառույցների քննություն

Մեղիատեքստերում տարածված են նաև այնպիսի կառույցներ, որոնցում գոյականաբար գործածված անորոշ դերբայը զուգորդվում է «անձնական դերանվան սեռական հոլովաձև + կողմից» կապակցությանը:

Քննենք հետևյալ օրինակները. «Թեև գիտեք, որ **իմ կողմից** նման բան **ասելն** այդքան էլ ճիշտ չի» (**«Երկիր», 23.11.2021**): «**Իմ կողմից** այս մասին **խոսելը** սխալ է» (**«Իրավունք», 08.05.2025**): «Կարևոր է ինչպես հայ մշակույթը և արվեստը **մեր կողմից ներկայացնելը...**» (**«Առավոտ», 29.04.2025**): «**Իմ կողմից** դրանք որպես մասունքներ **ներկայացնելը** համարում են...չափազանցություն» (**«Մամուլ», 28.01.2022**): «Զորախումբ ուղարկելու Նիկոլ Փաշինյանի որոշումն **իմ կողմից** սխալ **համարելը** պայմանավորված է Ղազախստանի իշխանության...

քաղաքականությամբ» (**«Մամուլ», 08.01.2022**): «Ի՛նչ միամտություն էր իմ կողմից մտածելը, որ իշխանության ճյուղերի տարանջատման, մարդու...իրավունքների,օրենքների ոտնահարումը կարող է ներսում կամ դրսում որևէ մեկի բողոքն առաջացնել» (**«Մամուլ», 24.06.2025**): **«Մեր կողմից թեկնածու առաջադրելը** ոչ թե իշխանության հավակնելու, այլ իշխանափոխության հասնելու քայլ է» (**«Այսօր», 12.06.2025**): «Նախքան դեպքի մասին իմ կողմից հայտարարություն անելը, ես անընդհատ կապի մեջ էի...» (**«Ալֆա-նյուզ», 30.07.2023**): «Նման իրավիճակում սխալ կլինի իմ կողմից ենթադրություններ անել, թե ինչ է տեղի ունեցել և ինչպես է այն հանգուցալուծվել,- ասել է Ռյաբկովը NBC News-ին տված հարցազրույցում» (**«Երկիր», 11.12.2024**): **«Իմ կողմից** այս հանրահայտ փաստերը վկայակոչելը սա դիտել է որպես իր... հասցեին հնչեցրած վիրավորանք» (**«Մամուլ», 17.10.2024**):

Անձնական դերանվան սեռական հոլովաձև + կողմից + անորոշ դերբայ կաղապարը գործառականորեն զուգադրվում է ռուսերենի «с моей / нашей стороны + инфинитив» մոդելի հետ,որում «с моей стороны» բաղադրիչը գործողությունը վերագրում է տվյալ անձին: Ռուսերեն պաշտոնական և դիվանագիտական խոսքում նման կառույցները կարող են ծառայել քաղաքավարության պահպանմանը, խոսողի զսպվածության արտահայտմանը, դիրքորոշման մեղմացմանը կամ խոսքային պատասխանատվության սահմանազատմանը: Այդ պատճառով դրանք միշտ չէ, որ զուտ ձևական բաղադրիչներ են և կարող են մասնակցել խոսքային վարքագծի կազմակերպմանը:

Հայերենում, սակայն, անորոշ դերբայով արտահայտված գործողության կատարողը կարող է անմիջականորեն մատնանշվել անձնական դերանվան սեռական հոլովաձևով: «Իմ ասելը», «իմ խոսելը», «իմ մտածելը» կապակցություններում «իմ» դերանունը ցույց է տալիս համապատասխան գործողություն կատարողին: Հայագիտական գրականության մեջ ենթակայական սեռականը աղերսակցվում է կողմնակի ենթակայի հետ (**տե՛ս Աբրահամյան Ա., Առաքելյան Վ., Քոսյան Վ., 1975, Գյուլբուդաղյան Ս., 1988**): «Կողմնակի ենթական

գործողության բուն կատարողն է, գործողության տերը: Այդ սեռականով լրացումը համանիշ է ենթակային» (**Գյուլբուդադյան Ս., 1988**):

Հետևաբար «իմ կողմից խոսելը», «իմ կողմից ասելը», «իմ կողմից մտածելը» կապակցություններում «կողմից» կապը սովորաբար չի ներմուծում նոր կատարող: Այն կրկնօրինակում է անձնական դերանվան սեռական հոլովով արդեն արտահայտված սուբյեկտային հարաբերությունը:

Օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ նման կառույցները սովորաբար զուգակցվում են գնահատողական իմաստ ունեցող բառերով. «Իմ կողմից ասելն այդքան էլ ճիշտ չէ», «Իմ կողմից խոսելը սխալ է», «միամտություն է», «չափազանցություն է» և այլն: Այս կառույցներում ընդգծվում է ոչ միայն գործողությունը որպես այդպիսին, այլև այդ գործողության հանդեպ տվյալ անձի վերաբերմունքը, գնահատականը, որը ներկայացվում է անուղղակի ձևով: Այն հաճախ գործածվում է այնպիսի պաշտոնական համատեքստերում, որտեղ անհրաժեշտ է անձնական դիրքորոշումը ոչ ուղղակիորեն արտահայտել: Սակայն հայերենում նույն հաղորդակցական նպատակը կարելի է արտահայտել լեզվի ներքին շարահյուսական միջոցներով՝ առանց հավելյալ «կողմից» կապի ներմուծման: Կախված խոսքի ենթատեքստից՝ կարող ենք գործածել հայերենի հետևյալ համարժեք տարբերակները՝

- «Իմ կողմից ասելն այդքան էլ ճիշտ չէ» → «Իմ ասելը ճիշտ չէ» կամ «Անպատշաճ է, որ ես այս մասին ասեմ»:
- «Իմ կողմից խոսելը սխալ է» → «Իմ խոսելը սխալ է» կամ «Միայն է, որ ես խոսեմ»:
- «Ի՛նչ միամտություն էր իմ կողմից մտածելը» → «Միամտություն էր իմ մտածելը» կամ «Ես միամիտ էի, որ մտածում էի»:

Առաջարկվող տարբերակները ցույց են տալիս, որ «կողմից» կապի հեռացումը չի հանգեցնի ո՛չ գործողություն կատարողի, ո՛չ էլ գնահատողական իմաստի կորստի: Սուբյեկտային հարաբերությունը կարելի է պահպանել սեռական հոլովաձևով, դիմավոր բայով կազմված ստորադաս նախադասությամբ կամ, եթե

կատարողը համատեքստից պարզ է, անորոշ դերբայի ինքնություն գործածությամբ: Այդուհանդերձ, յուրաքանչյուր օրինակի խմբագրական վերաձևակերպման ժամանակ կարևոր է պահպանել ոչ միայն գործողություն կատարողի իմաստը, այլև տվյալ համատեքստի գնահատողական, քաղաքավարական և հաղորդակցական երանգները, որոնք բնորոշ են այս տիպի կառույցներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու քննված կաղապարների՝ «գոյականի կամ դերանվան սեռական հոլովածն + կողմից + բայանուն» և «անձնական դերանվան սեռական հոլովածն + կողմից + անորոշ դերբայ» հիմքում ընկած է նույն քերականական սկզբունքը. բայանվան կամ անորոշ դերբայի հետ գործածված սեռական հոլովածնն իրականացնում է ենթակայական սեռականի գործառույթ՝ մատնանշելով գործողություն կատարող անձին կամ կազմակերպությանը: Այս կառույցներում «կողմից» կապը կորցնում է իր իմաստային բեռը. այն ոչ թե ձևավորում է նոր շարահյուսական հարաբերություն, այլ կրկնօրինակում է արդեն իսկ սեռական հոլովով արտահայտված սուբյեկտային կապը՝ դառնալով քերականորեն ավելորդ տարր՝ ավելորդաբանություն:

Կաղապարների կառուցվածքային և գործառութային զուգահեռականությունը ռուսերենի «со стороны кого-либо / чего-либо + отглагольное существительное» և «с моей / нашей стороны + инфинитив» կառույցների հետ հիմք է տալիս դրանք որակելու ռուսերենի ազդեցությամբ առաջացած շարահյուսական պատճենումներ:

Միևնույն ժամանակ ցույց տրվեց, որ ռուսերեն կառույցներին բնորոշ հաղորդակցական գործառույթները (սուբյեկտի մատնանշում, դիրքորոշման մեղմացում, պատասխանատվության սահմանազատում) հայերենում լիարժեք կարող են իրացվել ներքին լեզվական միջոցներով՝ սեռական հոլովածնով, դիմավոր բայով կամ ուղղակիորեն արտահայտված ենթակայով, առանց «կողմից» կապի հավելյալ ներգրավման:

Հատկապես կարևոր է այս հանգամանքը հաշվի առնել պաշտոնական հաղորդագրությունների և դիվանագիտական ելույթների թարգմանության ու վերաշարադրման ընթացքում, քանի որ նման կառույցների պարբերական վերարտադրությունը նպաստում է դրանց ամրակայմանն ու գործածության ոլորտի ընդլայնմանը գրական հայերենում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հստակորեն սահմանազատել «կողմից» կապի օրինաչափ գործածությունը (մասնավորապես՝ կրավորական կառույցներում, որտեղ այն միակ միջոցն է գործողություն կատարողին մատնանշելու համար) նրա ոչ օրինաչափ՝ ավելորդաբանական գործածությունից: Այս տարբերակումը էական նշանակություն ունի ինչպես մեդիատեքստերի լեզվական խմբագրման ու թարգմանության գործընթացում, այնպես էլ հրապարակախոսական խոսքի հստակության և հակիրճության պահպանման տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ. (1975), Հայոց լեզու, 2-րդ մաս, Երևան, «Լույս» հրատ.:
2. Աղայան Է. (1987), Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
3. Быстрова Е., Окунева А., Шанский Н. (1997), Учебный фразеологический словарь русского языка, Москва, “АСТ”.
4. Գյուլբուղադյան Ս. (1988), Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
5. Պապոյան Ա., Բաղիկյան Խ. (2003), Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
6. Պետրոսյան Հ. (1987), Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:

ՄԱՍՈՒԼ

1. «Թերթ», 03.06.2025, <https://tert.am/am/news/2025/06/03/iran-usa/4233136>
2. «Ժողովուրդ», 02.04.2025, <https://armlur.am/1457372/>
3. «Ազգ», 01.06.2022, <https://azg.am/news/>
4. «Երկիր», 10.04.2022, <https://www.yerkir.am/hy/article/2022/04/10/275457>
5. «168 ժամ», 10.06.2025, <https://168.am/2025/06/10/>
6. «Առավոտ», 17.09.2021, <https://www.aravot.am/2021/09/17/1216139/>
7. «Առավոտ», 28.01.2021, <https://www.aravot.am/2021/01/28/1167671/>
8. «Երկիր», 03.12.2022, <https://www.yerkir.am/hy/article/2022/12/03/3892>
9. «Երկիր», 11.10.2022, <https://yerkir.am/hy/article/2022/10/11/1127>
10. «Երկիր», 23.11.2021, <https://yerkir.am/hy/article/2021/11/23/262997>
11. «Իրավունք», 08.05.2025, <https://iravunk.com/?l=am&p=312501>
12. «Առավոտ», 29.04.2025, <https://www.aravot.am/2025/04/29/1484604/>
13. «Մամուլ», 28.01.2022, <https://m.mamul.am/am/news/231069>
14. «Մամուլ», 08.01.2022, <https://mamul.am/am/news/229606>
15. «Մամուլ», 24.06.2025, <https://mamul.am/am/news/329121>
16. «Այսօր», 12.06.2025, <https://aysor.am/am/news/2025/06/12/>
17. «Ալֆա-նյունգ», 30.07.2023, <https://alphanews.am/kxmk-n-texekacrel-e-or-vagif-xachatryan/>
18. «Երկիր», 11.12.2024, <https://yerkir.am/hy/article/2024/12/11/284210>
19. «Մամուլ», 17.10.2024, <https://mamul.am/am/news/305481>

REFERENCES

1. **Abrahamyan S., Arakelyan V., Kosyan V. (1975)**, Hayoc lezow /Armenian Language/, Part 2, Yerevan, “Luys” Publishing House.
2. **Aghayan E. (1987)**, Lezvabanowt'yan himownqner /Foundations of Linguistics/. Yerevan, Yerevan University Press.

3. **Bystrova E., Okuneva A., & Shansky N. (1997)**, Uchebnyy frazeologicheskiy slovar' russkogo yazyka /A Learner's Dictionary of Phraseology/, Moscow, "AST".
4. **Gyulbudaghyan S. (1988)**, Jhamanakakic hayereni sharahyowsowt'yown /Syntax of Modern Armenian/, Yerevan, YSU Publishing House.
5. **Papoyan A., Badikyan Kh. (2003)**, Jhamanakakic hayoc lezvi sharahyowsowt'yown /Syntax of Modern Armenian/, Yerevan, YSU Publishing House.
6. **Petrosyan H. (1987)**, Hayerenagitakan bar'aran /Dictionary of Armenian Studies/, Yerevan, "Hayastan" Publishing House.

PRESS

1. "Tert," 03.06.2025, <https://tert.am/am/news/2025/06/03/iran-usa/4233136>
2. "Zhoghovurd," 02.04.2025, <https://armlur.am/1457372/>
3. "Azg," 01.06.2022, <https://azg.am/news/>
4. "Yerkir," 10.04.2022, <https://www.yerkir.am/hy/article/2022/04/10/275457>
5. "168 am," 10.06.2025, <https://168.am/2025/06/10/>
6. "Aravot," 17.09.2021, <https://www.aravot.am/2021/09/17/1216139/>
7. "Aravot," 28.01.2021, <https://www.aravot.am/2021/01/28/1167671/>
8. "Yerkir," 03.12.2022, <https://www.yerkir.am/hy/article/2022/12/03/3892>
9. "Yerkir," 11.10.2022, <https://yerkir.am/hy/article/2022/10/11/1127>
10. "Yerkir," 23.11.2021, <https://yerkir.am/hy/article/2021/11/23/262997>
11. "Iravunk," 08.05.2025, <https://iravunk.com/?l=am&p=312501>
12. "Aravot," 29.04.2025, <https://www.aravot.am/2025/04/29/1484604/>
13. "Mamul," 28.01.2022, <https://m.mamul.am/am/news/231069>
14. "Mamul," 08.01.2022, <https://mamul.am/am/news/229606>
15. "Mamul," 24.06.2025, <https://mamul.am/am/news/329121>
16. "Aysor," 12.06.2025, <https://aysor.am/am/news/2025/06/12/>
17. "Alpha News," 30.07.2023, <https://alphanews.am/kxmk-n-texekacrel-e-or-vagif-xachatryan/>

18. "Yerkir," 11.12.2024, <https://yerkir.am/hy/article/2024/12/11/284210>

19. "Mamul," 17.10.2024, <https://mamul.am/am/news/305481>

Нунэ Хачатрян

Синтаксические шаблонные конструкции с послелогом «կողմից»

(«со стороны») в языке СМИ Республики Армения:

на материале публикаций 2021–2025 гг.

Заключение

Ключевые слова и выражения: послелог «կողմից» («со стороны»), синтаксическая модель, субъектный генитив, отглагольное существительное, инфинитив, грамматический плеоназм.

В статье рассматриваются синтаксические шаблонные конструкции с послелогом «կողմից» («со стороны») на материале публикаций средств массовой информации Республики Армения за 2021–2025 гг. Цель исследования заключается в выявлении структурных, семантических и функциональных особенностей данных конструкций и факторов, способствующих их распространению, а также в оценке их соответствия синтаксическим закономерностям армянского языка. Для решения поставленных задач мы использовали описательно-аналитический и сравнительно-грамматический методы.

Выделены две основные модели: «со стороны кого-либо / чего-либо + отглагольное существительное» и «с моей / нашей стороны + инфинитив». Наиболее часто они встречаются в медиатекстах, отражающих политическую, дипломатическую и официальную коммуникацию. Структурная и функциональная соотнесённость рассматриваемых конструкций с соответствующими моделями русского языка даёт основание квалифицировать их как проявления синтаксического калькирования.

Исследование показывает, что в данных конструкциях производитель действия уже выражен формой родительного падежа существительного или местоимения. При отглагольном существительном и инфинитиве эти формы выполняют функцию субъектного генитива, указывая на лицо или организацию, которым приписывается соответствующее действие. В подобных случаях послелог «կողմից» («со стороны») не формирует нового синтаксического отношения и не привносит дополнительного смыслового содержания, а дублирует субъектное отношение, уже выраженное формой родительного падежа.

В статье предлагается заменять подобные конструкции способами выражения, соответствующими внутренним закономерностям армянского языка: употреблять форму родительного падежа без дополнительного послелога, личную форму глагола либо непосредственно выраженное подлежащее.

Nune Khachatryan

**Syntactic Pattern Constructions with the Postposition “կողմից” (on the part of) in the
Language of the Media: Based on Materials from the Mass Media
of the Republic of Armenia, 2021–2025**

Conclusion

Key words and expressions: postposition “կողմից” (on the part of), syntactic pattern, subjective genitive, deverbal noun, infinitive, grammatical pleonasm.

The article examines formulaic syntactic constructions involving the postposition “կողմից” (on the part of), on the basis of publications issued by the mass media of the Republic of Armenia between 2021 and 2025. The study aims to identify the structural, semantic, and functional features of these constructions, determine the factors contributing to their spread, and assess their conformity with the syntactic patterns of Armenian. To solve the identified problems, we applied descriptive-analytical and comparative-grammatical methods.

Two principal patterns are identified: "genitive form of a noun or pronoun + կողմից + deverbal noun" and "genitive form of a personal pronoun + կողմից + substantivized infinitive." These patterns occur most frequently in media texts reflecting political, diplomatic, and official communication. Their structural and functional correspondence with equivalent Russian patterns provides grounds for interpreting them as manifestations of syntactic calquing.

The findings demonstrate that, in these constructions, the agent of the action is already expressed by the genitive form of a noun or pronoun. When used with a deverbal noun or an infinitive, these forms function as subjective genitives, identifying the person or institution to whom the corresponding action is attributed. In such cases, the postposition "կողմից" (on the part of) neither establishes a new syntactic relation nor contributes additional semantic content; instead, it duplicates the subject relation already encoded by the genitive form.

The article proposes replacing such constructions with forms of expression that conform to the internal structural principles of Armenian, namely the genitive form without an additional postposition, a finite verb form, or an explicitly expressed subject.

Նունե Խաչատրյան - ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ լաբորանտ, ՀՀ Բրյուսովի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: Հեղինակ է 40 հոդվածի: Khachatryan.nune.g@mail.ru

Нунэ Хачатрян - Канд. филол. наук, доцент; Старший лаборант отдела современного армянского языка Института языка имени Гр. Ачаряна НАН РА; доцент кафедры армяноведения Ереванского государственного университета языков и социальных наук им. В. Брюсова. Автор 40 статей. khachatryan.nune.g@mail.ru

Nune Khachatryan - PhD (Philology), Associate Professor; Senior Laboratory Assistant, Department of Modern Armenian, H. Acharyan Institute of Language, National Academy of Sciences of the Republic of Armenia; Associate Professor, Chair of Armenology, Yerevan Brusov State University of Languages and Social Sciences. Author of 40 articles. khachatryan.nune.g@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 28.06.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.07.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.